**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**N ԳՀԾՁԲ-20-14/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան 07-ը 09 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ն, ի դեմս Կազմակերպության ռեկտոր Ա. Լոքյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 09.07.2020թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-14/5-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.7 կետը, որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կարիքը վերանալու պատճառով Պատվիրատուի մոտ անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվազեցնել Պայմանագրի 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսված 319,872 ՀՀ դրամ ֆինանսական հատկացումները և առկա է Կատարողի գրավոր համաձայնությունը նշված ֆինանսական միջոցները նվազեցնելու վերաբերյալ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի՝ Պայմանագրի 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունների մասով լուծել Պայմանագիրը՝ դրա համար սույն համաձայնագրով սահմանելով նոր №1 և №2 Հավելվածներ: Արդյունքում Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 204,918 (երկու հարյուր չորս հազար ինը հարյուր տասնութ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

**2.Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 4 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Կիևյան-8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Երևանի թիվ 1 ՏԳԲ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 900018005646 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00035088 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | ռեկտոր |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա. ԼՈՔՅԱՆ |

**Հավելված N 1**
№ ԳՀԾՁԲ-20-14/5-1 գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Տեխնիկական բնութագրերը |
|---|---|---|
| *Դասախոսի ծառայություն, այդ թվում* | | |
| 1. | «Ռազմավարական կառավարում» | Դասախոսական և ուսումնամեթոդական բնույթի մասնագիտական ծառայություններ՝ Մշակել ստորև ներկայացված թեմաներով դասախոսություններ և ըստ ուսումնական պարապմունքների բաշխված համապատասխան ժամաքանակներով անցկացնել ուսումնական պարապմունքներ՝ «Պետության ռազմական անվտանգության» ռազմավարական մակարդակի գերատեսչական ակադեմիական վերապատրաստման դասընթացի շրջանակներում: |

| ԹԵՄԱ | ԸՆԴՀԱՆՈՒՐ | ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ | ՍԵՄԻՆԱՐ | ԻՆՔՆԱՊԱՏՐԱՍՏՈՒ |
|---|---|---|---|---|
| ԹԵՄԱ 1. Կառավարման էությունը և մեթոդաբանությունը, զարգացման փուլերը, սկզբունքները | 1 | 1 | | |
| ԹԵՄԱ 2.Կառավարման տեսությունների զարգացման դպրոցները | 1 | 1 | | |
| ԹԵՄԱ 3. Ռազմավարական կառավարման էությունը: Ռազմավարական կառավարման խնդիրները | 7 | 2 | 2 | 3 |
| ԹԵՄԱ 4. Ռազմավարության հարձակողական, պաշտպանական բնույթը և դրա դրական ու բացասական կողմերը | 6 | 2 | 2 | 2 |
| ԹԵՄԱ 5. Ռազմավարական պլանավորման դպրոցները ըստ Հենրի Մինցբերգի | 6 | 2 | 2 | 2 |
| ԹԵՄԱ 6. Կառավարման կազմակերպական կառուցվածքի տեսակները | 2 | 2 | | |
| ԹԵՄԱ 7. Կառավարման գործում մոտիվացիան և դրա ձևերը | 2 | 2 | | |
| ԹԵՄԱ 8. Վերահսկողությունը՝ որպես կառավարման գործառույթ | 2 | 2 | | |
| ԹԵՄԱ 9. Կառավարման մեթոդների էությունը և դասակարգումը | 2 | 2 | | |
| ԹԵՄԱ 10. 21-րդ դարի կառավարման հիմնախնդիրները(Պ. Դրաքեր): Կառավարման նոր պարադիգման և կառավարչական հաղորդակցություններ | 6 | 2 | 2 | 2 |

(Տեխնիկական պահանջները երկու ակադեմիական ժամ ընդգրկող դասախոսության պարագայում՝ թղթային տարբերակով՝ հետևյալ ծավալով. նվազագույնը 35000 նիշ՝ բացակներով), ծավալը՝ 15–20 էջ, A4 թղթի վրա (տառաչափը՝ 12, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից և վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ), գիտական ապարատի (հղումների) առկայությամբ:

Դասախոսությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին և պահանջներին.

- գիտականություն (գիտական ապարատ)
- ներածություն (արդիականություն, նպատակ, խնդիրներ)
- առնվազն երկու ուսումնական հարց
- օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ
- օգտագործված հասկացութատերմինաբանական ապարատի ճշգրտություն,
- ամփոփում:

Դասախոսը պետք է ունենա առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, դասընթացի մեկնարկից տասն աշխատանքային օր առաջ նա պետք է իր դասախոսությունների փաթեթը ներկայացնի ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում գործող Գիտական խորհրդին՝ փորձաքննության նպատակով: Դասընթացը

| | | |
|---|---|---|
| | | իրականացվում է մեկ խմբով, խմբում՝ 15-18 մասնակից: Դասընթացի ուսումնական պարապմունքները կազմակերպվում են աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից մինչև 18:00-ն (դասացուցակը՝ աշխատանքային ժամերով և ընդմիջումներով տրամադրվում է դասընթացի մեկնարկից առնվազն 5 աշխատանքային օր առաջ): Դասընթացի մասնակիցների հաճախումների գրանցման վերաբերյալ տեղեկույթը գրավոր տեսքով կատարողը ներկայացնում է պատվիրատուին յուրաքանչյուր օր՝ դասապրոցեսի ավարտից հետո: Լսարանը՝ դասընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական պարագաներով, ապահովվում է պատվիրատուի կողմից: |
| 2. | «Մշակութաբանություն» | Դասախոսական և ուսումնամեթոդական բնույթի մասնագիտական ծառայություններ՝<br>Մշակել ստորև ներկայացված թեմաներով դասախոսություններ և ըստ ուսումնական պարապմունքների բաշխված համապատասխան ժամաքանակներով անցկացնել ուսումնական պարապմունքներ՝ «Պետության ռազմական անվտանգության» ռազմավարական մակարդակի գերատեսչական ակադեմիական վերապատրաստման դասընթացի շրջանակներում: |

| ԹԵՄԱ | ԸՆԴՀԱՆՈՒՐ | ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ | ՍԵՄԻՆԱՐ | ԻՆՔՆԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ |
|---|---|---|---|---|
| **ԹԵՄԱ 1.** Մշակութաբանության առարկան և խնդրակարգը. մշակույթի էությունը, գործառույթները և կառուցվածքը | **6** | 2 | 2 | 2 |

(Տեխնիկական պահանջները երկու ակադեմիական ժամ ընդգրկող դասախոսության պարագայում՝ թղթային տարբերակով՝ հետևյալ ձևաչափով. նվազագույնը 35000 նիշ՝ բացականերով), ծավալը՝ 15–20 էջ, A4 թղթի վրա (տառաչափը՝ 12, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից և վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ), գիտական ապարատի (հղումների) առկայությամբ:
Դասախոսությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին և պահանջներին.
- գիտականություն (գիտական ապարատ)
- ներածություն (արդիականություն, նպատակ, խնդիրներ)
- առնվազն երկու ուսումնական հարց
- օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ
- օգտագործված հասկացութատերմինաբանական ապարատի ճշգրտություն,
- ամփոփում:

Դասախոսը պետք է ունենա առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, դասընթացի մեկնարկից տասն աշխատանքային օր առաջ նա պետք է իր դասախոսությունների փաթեթը ներկայացնի ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում գործող Գիտական խորհուրդին՝ փորձաքննության նպատակով: Դասընթացը իրականացվում է մեկ խմբով, խմբում՝ 15-18 մասնակից: Դասընթացի ուսումնական պարապմունքները կազմակերպվում են աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից մինչև 18:00-ն (դասացուցակը՝ աշխատանքային ժամերով և ընդմիջումներով տրամադրվում է դասընթացի մեկնարկից առնվազն 5 աշխատանքային օր առաջ): Դասընթացի մասնակիցների հաճախումների գրանցման վերաբերյալ տեղեկույթը գրավոր տեսքով կատարողը ներկայացնում է պատվիրատուին յուրաքանչյուր օր՝ դասապրոցեսի ավարտից հետո: Լսարանը՝ դասընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական պարագաներով, ապահովվում է պատվիրատուի կողմից:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

Ն. ՑՈՒՀՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ
ռեկտոր

Ա. ԼՈՔՅԱՆ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Չ/հ | Ծառայության անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի գին /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը՝ 2020թ. |
|---|---|---|---|---|---|---|
| *Դասախոսի ծառայություն, այդ թվում* | | | | | | |
| 1. | Ռազմավարական կառավարում | ակադեմիական ժամ | 35 | 4,998 | 174,930 | հուլիս |
| 2. | Մշակութաբանություն | ակադեմիական ժամ | 6 | 4,998 | 29,988 | հուլիս |
| **Ընդամենը** | | | | | **204,918** | |

**Ծանոթություն՝** Ծառայության մատուցման վայրը՝ ք. Երևան, Կ.Ուլնեցու 56/6:

**Հավելված N 2**
№ ԳՀԾԶԲ-20-14/5-1 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Չ/հ | Ծառայության անվանումը | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը կիրականացվի 2020թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| *Դասախոսի ծառայություն, այդ թվում* | | | | | | | | | |
| 1. | Ռազմավարական կառավարում | 80591100/2/10/1 | 174,930 | 174,930 | 174,930 | 174,930 | 174,930 | 174,930 | 174,930 |
| 2. | Մշակութաբանություն | 80591100/3/10/1 | 29,988 | 29,988 | 29,988 | 29,988 | 29,988 | 29,988 | 29,988 |
| **Ընդամենը** | | | **524,790** | **204,918** | **204,918** | **204,918** | **204,918** | **204,918** | **204,918** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

Ն. ՅՈՒՆՈՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ ռեկտոր

Ա. ԼՈՔՅԱՆ